ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 հուլիսի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

98
(2764)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

2021 թվականի դեկտեմբերի 22-ին Երեւանի քաղաքապետ ընտրված Հրաչյա Սարգսյանը պաշտոնավարման առաջին երեք ամիսների ընթացքում հասցրել է օրինականացրել Հայաստանի ամենաթանկ ծառայություններից մեկը մատուցող «Դվին» հյուրանոցային համալիրի անօրինական կառուցված մոտ 16 հազար քառակուսի մետր տարածքը:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ Երեւանի քաղաքապետարանից:

2021 թվականի սեպտեմբերի 14-ին Երեւանի դերասան քաղաքապետ Հայկ Մարությանը հայտարարեց, որ ապօրինի շինություն կա «Դվին» հյուրանոցի վրա: «Ասեմ ավելին՝ բացի այդ ապօրինի կառուցված երկու հարկից, հենց համալիրի վրա տարօրինակ երկուհարկանի մի կառույց էլ է ավելացել՝ ապակեպատ: «Դվին» հյուրանոցի հետեւում գտնվող շենքի վրա են հարկեր ավելացվել, եւ դրա հետ կապված կառուցապատողը երկու ճանապարհ ունի՝ կամ երկու հարկերը պետք է վերացնի, կամ ամբողջ շենքը որպես ինքնակամ կառույց պետք է օրինականացվի»,- վճռական հայտարարեց Հայկ Մարությանը, ու այլեւս չիմացվեց՝ հարցն ինչպես լուծվեց:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցում ուղարկեց Երեւանի քաղաքապետարան՝ պահանջելով հայտնել, թե ինչպես լուծվեց ապօրինի կառուցված հարկերի հարցը:

Ի պատասխան՝ քաղաքապետարանից հայտնել են. «26.11.2021թ. Երեւանի քաղաքապետարան է դիմել ««Դվին» հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ն՝ կապված ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման եւ տնօրինման կարգը հաստատելու մասին» հ.912-Ն որոշման շրջանակներում Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Պարոնյան փողոց հ.40 հասցեում նախագծային շեղումներով կառուցվող եւ ինքնակամ կարգավիճակ ձեռք բերած շինության օրինականացման հետ: Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչության կողմից 06.12.2021թ. տրվել է մասնագիտական եզրակացություն, որի հիման վրա՝ կայացվել է Երեւանի քաղաքապետի 03.02.2022թ. հ.330-Ա որոշումը՝ ինքնակամ կառույցն օրինականացնելու մասին:

Որոշմանը կից տրամադրվել է համապատասխան նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) օրինականացվող կիսակառույց շինությունը ավարտին հասցնելու նպատակով»: Տեղեկացանք նաեւ, որ ընդհանուր օրինականացվել է ապօրինի կառուցված 15823.85 քառ. մետր կառույց, որի համար 228654633 (երկու հարյուր քսանութ միլիոն վեց հարյուր հիսունչորս հազար վեց հարյուր երեսուներեք) դրամ 09.03.2022թ. ««Դվին» հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ն վճարել է Երեւան համայնքի բյուջե:

Այսպիսով, ստացվում է, որ երբ Արտակ Թովմասյանը Հայրենիքի փրկության շարժման օրերին Բաղրամյան փողոցում սպիտակ վրաններ էր տեղադրել ու պայքարում էր հայրենիքի փրկության համար, ՔՊ-ական քաղաքապետը սպառնաց նրան քանդել «Դվին»-ի ապօրինությունները, իսկ երբ Արտակ Թովմասյանի դրած վրանները «քամին տարավ», ինքն էլ մոռացավ հայրենիքի փրկությունը, ոչ միայն օրինականացվեցին ապօրինի տարածքները, այլեւ շինթույլտվություն տրվեց ապօրինությունը մինչեւ վերջ կատարելու համար:

Շարունակելի...

Եթե որեւէ դատարանում նախատեսված է դռնբաց դատական նիստ, նշանակում է, որ լրագրողները ազատ կարող են մասնակցել, լուսաբանել եւ հանրայնացնել այն: Հայաստանի որեւէ ներպետական օրենքով կամ միջազգային կոնվենցիաներով արգելված չէ դռնբաց նիստի լուսաբանումը: Այս տարրական ճշմարտությունը ՀՀ օմբուդսմեն Անահիտ Մանասյանը չգիտի կամ չի ցանկանում իմանալ, դրա համար երեկ, պատասխանելով լրագրողների հարցի, թե ինչ իրավունքով է ԲԴԽ-ն արգելել իր դատական նիստի լուսաբանումը, որտեղ քննվում էր դատավոր Դավիթ Հարությունյանի լիազորությունների դադարեցման հարցը, ասել է. «Լրագրողների աշխատանքը պետք է լինի երաշխավորված պետական մարմիններում: Ես չեմ խոսի ԲԴԽ-ի մասին, որովհետեւ խոսքը դատական վարույթի մասին է, եւ Մարդու իրավունքների պաշտպանի տեսանկյունից կարող է խնդրահարույց իրավիճակ ձեւավորվել: Պետք է լինի հստակ կանոնակարգ, որը կուղղի լրագրողների եւ քաղաքացիների ներկայացվածության պրոցեսը: Մենք հիմա միջազգային չափանիշների ուսումնասիրություն ենք իրականացնում»: Հատուկ օմբուդսմենի համար ընդգծենք, որ արդարադատության իրականացումն ապահովելու կարեւորագույն բաղադրիչներից է արդարադատության իրականացման հրապարակայնությունը: Վերահսկողություն պետք է լինի դատական իշխանության նկատմամբ, եւ, ամենակարեւորը, դատական իշխանությունը հաշվետու պետք է լինի հասարակությանը: ՀՀ-ն՝ որպես մի շարք միջազգային կազմակերպությունների անդամ, ստորագրել է մարդու իրավունքներին վերաբերող կարեւորագույն միջազգային փաստաթղթեր, որով պարտավորվել է հարգել մարդու իրավունքները, այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքը, որն իր մեջ պարունակում է հրապարակային դատաքննության իրավունքը: Ի՞նչ միջազգային չափանիշներ է ուսումնասիրում օմբուդսմենը, երբ դրանք վաղուց կան, գրված են, պարզապես պետք է պահպանվեն, ինչը Նիկոլ Փաշինյանի իշխանության պայմաններում չի արվում:

Մեկ շաբաթից կլրանա մեկ տարին՝ հաշված այն ողբերգական օրվանից, երբ պրոդյուսեր Արմեն Գրիգորյանը դատարանի դահլիճում մահացավ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մինչ օրս պրոդյուսերի մահվան մեղավորները հայտնաբերված չեն, ու մինչ օրս մահվան այս դեպքի համար որեւէ մեկը պատասխանատվության չի կանչվել: Հիշեցնենք, որ Արմեն Գրիգորյանը մահացել էր 2022 թվականի հուլիսի 15-ին Երեւան քաղաքի Կենտրոնի դատարանի դահլիճում: Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի «Կենտրոն» նստավայրում նրա գործով նախնական դատալսումների ժամանակ Արմեն Գրիգորյանը հանկարծ կորցրել էր գիտակցությունը եւ ընկել աթոռից: Կարճ ժամանակ անց հայտնի էր դարձել, որ Արմեն Գրիգորյանը մահացել է: Արմեն Գրիգորյանը պահվում էր անազատության մեջ 2022 թվականի մայիսի 17-ից: Պրոդյուսեր Արմեն Գրիգորյանի մահվան դեպքի առթիվ քրեական վարույթ է նախաձեռնվել: Քրեական վարույթը նախաձեռնվել է՝ ՀՀ ՔՕ 187-րդ հոդվածով, որը վերաբերում է բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն: Այսինքն՝ իրավապահ համակարգը պրոդյուսերի մահվան մեղքը փորձում է բարդել ՔԿՀ-ի եւ սպասարկող բուժանձնակազմի վրա: Իրավապահների համար քննության առարկա չդարձավ ամենակարեւոր հարցը՝ արդյոք Արմեն Գրիգորյանի կալանավորումը հիմնավո՞ր էր, թե՞ ոչ: Ամեն դեպքում, «Ժողովուրդ» օրաթերթը Գրիգորյանի մահվանից մեկ տարի անց դիմեց ՀՀ քննչական կոմիտե՝ հասկանալու, թե գործով կա արդյոք մեղադրյալ, թե ոչ: Ի պատասխան՝ լրատվականից հայտնեցին. «Վարույթով նշանակված է դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն, որի եզրակացությունը դեռեւս չի ստացվել»: Մեզ հասած լուրերի համաձայն՝ այս հանձնաժողովի եզրակացությունից հետո նախաքննական մարմինը կորոշի՝ պրոդյուսերի մահվան մեջ կան մեղավորներ, թե ոչ:

2008 -2022 թվականներին Պետական եկամուտների կոմիտեում տարբեր պաշտոններ զբաղեցրած Արմեն Մհերյանը, որն այժմ Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարն է, 2022 թվականին 1 մլն 900 հազար դրամով ավտոտնակ է վաճառել: Տարվա վերջում նա ունեցել է մեկ բնակարան եւ մեկ ավտոտնակ, որոնք բոլորն էլ ձեռք են բերվել 2019 թվականին, երբ նա դեռ աշխատում էր ՊԵԿ-ում: Մհերյանն իր պաշտոնին նշանակվել է անցյալ տարի: Այդ նույն տարում նա ձեռք է բերել «Մազդա» մակնիշի ավտոմեքենա եւ վճարել դրա համար 2 մլն 388 հազար դրամ, սակայն ունի նաեւ չորս այլ ավտոմեքենա, որոնք գնվել են տարբեր տարիներին: Այսինքն՝ վարչական շրջանի ղեկավարն ունի հինգ մեքենա: Մհերյանը բանկային հաշվին գումար չի ունեցել, կանխիկ ունեցել է 1 մլն 900 հազար դրամ եւ 35 հազար դոլար: Մեկ տարվա ընթացքում նրա եկամուտը 13 մլն դրամ է եղել, որը գոյացել է աշխատավարձերից եւ գույքն օտարելուց ստացված եկամուտից: Այս եկամուտների պայմաններում նա ունի նաեւ 62 մլն դրամի վարկ, որից 14 միլիոնը բնակարանի հիփոթեք է, իսկ մյուս տվյալները պաշտպանված են, մեզ հասանելի չեն:

ԶՐՈՒՅՑ

ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ՝ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Հանրապետություն» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ, Երեւանի ավագանու «Լույս» խմբակցության անդամ Անի Խաչատրյանը անդրադարձել է Երեւանի ավագանու ընտրություններին «Հանրապետություն» կուսակցության թեկնածությանը, հնարավոր մրցակիցներին եւ քարոզարշավը սկսելուն:

-Տիկին Խաչատրյան, արդեն հայտնի է, որ «Հանրապետություն» կուսակցությունը մասնակցելու է ավագանու ընտրություններին, եւ ձեր թեկնածուն Արտակ Զեյնալյանն է: Ինչպե՞ս ընտրությունը կանգնեց իր անձի վրա:

-Արտակ Զեյնալյանին դժվար չենք ընտրել: Նա նաեւ եղել է «Լույս» դաշինքի քաղաքապետի թեկնածուն: Քննարկման տարբերակներ ունեինք. ես բազմիցս ասել եմ, որ բարձր պաշտոն, այս պարագայում՝ մայրաքաղաքի քաղաքապետ ունենալու համար, որը կարելի է ասել, որ Հայաստանի Հանրապետության կեսից ավելին է, քաղաքապետը պետք է լինի կենսագրություն ունեցող մարդ, եւ Արտակ Զեյնալյանի փորձը մեզ համար արդեն բավական էր, որ Երեւանը նրա կարիքն ունի իսկապես:

-Ի՞նչ այլ տարբերակներ եք ունեցել քաղաքապետի թեկնածուի:

-Ներկուսակցական եւ դրսից ունեինք թեկնածուներ:

-Ըստ Ձեզ՝ երեւանցին սիրու՞մ է Արտակ Զեյնալյանին եւ կընտրի՞ նրան:

-Վստահ եմ, որ կընտրի Արտակ Զեյնալյանին: Նրա արած աշխատանքը, նրա փորձը ակնհայտ է, եւ ՀՀ քաղաքացին չի կարող նրան չսիրել եւ չընտրել: Նրան ոչ միայն պետք է սիրել, այլեւ գնահատել նրա ոչ միայն անցած, այլեւ այն ճանապարհը, որը հիմա է անցնում:

-Քանի որ արդեն հայտնի է, թե մոտավորապես որ թեկնածուներն են լինելու ընտրություններին, կուզենայի իմանալ, ըստ Ձեզ, ովքե՞ր են ձեր հիմնական մրցակիցները:

-Ես կարծում եմ՝ ցանկացած քաղաքական ուժի համար բոլոր թեկնածուներն էլ մրցակից են: Բացարձակապես ոչ մեկին չունենք առանձնացված: Գրեթե բոլոր հայտնի թեկնածուների ընտրողն էլ կարող է գալ եւ մեզ ընտրել, որովհետեւ ես ուզում եմ ու վստահ եմ, որ այսօրվա ԱԺ-ն մեծ դաս է Հայաստանի Հանրապետության» այս դեպքում՝ Երեւանի քաղաքացիներին, որ սեւ ու սպիտակների քաղաքականությունից դուրս պետք է գնալ՝ գաղափարն ընտրելու, եւ ես շատ եմ ուզում, որ Երեւանի քաղաքացին ընտրի այն թեկնածուին, որն ունի ծրագիր եւ կարող է կյանքի կոչել այդ ծրագիրը:

-Ըստ փակ հարցումների՝ այս պահին ամենամեծ վարկանիշն ունեցող թեկնածուն Հայկ Մարությանն է, եթե վերջնականապես հաստատի իր մասնակցությունը: Ըստ Ձեզ՝ ինչո՞վ է նա գրավել երեւանցուն:

-Ես չեմ հավատում այդ հարցումներին, ընտրությունների արդյունքները ցույց կտան ամեն բան: Ես շատ կցանկանամ, որ Մարությանը թեկնածություն դնի, բայց նաեւ ափսոսանք նորից կզգամ, որ Մարության դերասանը կրկին փչանում է քաղաքական ասպարեզում, որովհետեւ ինքը փայլուն դերասան է, բայց ամեն անգամ՝ ավելի փչացող քաղաքական կերպար: Ընտրությունների արդյունքները, եւս մեկ անգամ եմ ասում, ամեն ինչ ցույց կտան, եթե, իհարկե, առաջադրվի: Հայկ Մարությանին ավելի ողջամիտ նախկին քաղաքապետ եմ համարում, որը ճիշտ կգնահատի իրավիճակն ու չի գնա նման քայլի:

Զրուցեց ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ Է

«2020-ին Հայաստանը պարտվեց պատերազմում, չնայած կարող էր հաղթել: Այնպիսի թեթեւամիտ, ինչպիսին Ալիեւն էր, որ հարձակվեց Հայաստանի վրա, դժվար է պատկերացնել, բայց երեւի մի բան գիտեր, որ Հայաստանը չի կարող պատասխանել»,- մամուլի ասուլիսին նշեց ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը:

«Հայաստանն անում էր երեք քայլ, ու Ադրբեջանը փախչում էր հավերժականորեն պատմության գիրկը: Լուծում էր Սարսանգի հարցը, Մարտակերտի ճակատը վերացնում էր, երկրորդը՝ «Տոչկո Ռ»-երով հարվածում էր նավթամուղ-գազամուղներին, երրորդը՝ միջուկային թափոնները կարող էր շաղ տալ հարավային ռազմաճակատում եւ վերջացնել:

Մենք այսօր ուկրաինական պատերազմում տեսնում ենք, որ Կախովկայի ՀԷԿ-ը պայթեցրին ռազմական նպատակներով, տեսնում ենք, որ արեւմտյան երկրներից մեկը Ուկրաինային սովորեցնում է օգտագործելու կեղտոտ միջուկային զենք: Ճիշտ են անում, պատերազմում հաղթելու կամ չպարտվելու համար ամեն ինչ պետք է անել: Այս երեք բանը սեպտեմբերի 28-ի երեկոյան ասվել է Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանին: Ես դեռ չեմ խոսում, որ «Իսկանդեր» ունեինք, որ կարող էինք օգտագործել, չեմ խոսում հարավում ավանտյուրիստական հակահարձակման մասին»,-ասաց Բագրատյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ նա հիշեցրեց, որ այդ ժամանակ իրար հետեւից հարցազրույցներ էր տալիս ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը եւ ասում, որ մենք բարբարոս չենք, որ նման քայլեր անենք: «Նրանք հարձակվել, մեզ մորթում են, բարբարոս չեն, մենք ենք բարբարոսը: Ո՞րն էր իր օգուտը, ինչո՞ւ էր նման բաներ ասում»:

Անդրադառնալով նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությանը՝ Բագրատյանն ասաց, որ դա եղել է Հայաստանի խնդրանքով Ռուսաստանի միջնորդությամբ: «Ու հանկարծ այնտեղ հայտնվում է 9-րդ կետը, որը չի վերաբերում Արցախին: Մի կետ էլ կար, որ զորքերը պետք է կանգնեն այնտեղ, որտեղ կանգնած են: Այդ ժամանակ մեր զորքերը Կապանից 20 կմ առաջ են: Փաշինյանն ասում է զորքերին՝ հե՛տ եկեք: Իրեն ասում են՝ բա էստեղ գրված է, որ որտեղ կանգնած ենք, էնտեղ պետք է մնանք: Ասում է՝ չէ՛, դա իմ որոշումն է: Ընդ որում՝ հետ են գալիս ավելին, քան պետք է, զիջում են նաեւ Հայաստանի տարածքից, օրինակ՝ Գորիս-Ճակատեն հատվածը:

Հայտարարության 9-րդ կետում գրված է՝ «անխոչընդոտ ճանապարհ»: Փոխանակ Նիկոլ Փաշինյանը կառչեր նոյեմբերի 9-ի հայտարարությունից՝ ասելով, որ այդ ճանապարհը ինչ էլ տրվի, ռուսներն են հսկելու, գնամ, ռուսների հետ հասնեմ ճանապարհների այնպիսի կարգավիճակի, որ Հայաստանի ինքնիշխանությունը չխախտվի կամ նվազագույն չափով խախտվի, սկսեց հակառուսական պրոպագանդան»,- ընդգծեց Բագրատյանը:

ՆՈՐ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Գեղամ Գեւորգյանը Ժնեւում ընթացող Միացյալ ազգերի առեւտրի եւ զարգացման համաժողովի (UNCTAD) մրցակցության օրենքի եւ քաղաքականության միջկառավարական խմբի 21-րդ նիստի ընթացքում անդամ-պետությունների մրցակցային մարմինների ղեկավարների քվեարկությամբ ընտրվել է նիստի փոխնախագահ: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովից:

ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ՓԱԿ Է

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի գրասենյակի գործունեությունը դադարեցված է: «Ժողովուրդ» օրաթերթն իր աղբյուրներից տեղեկացավ, որ ՔՊ գրասենյակի փաստացի լուծարման պատճառը դարձյալ ընտրակեղծիքներն են: Պարզվում է, որ Մալաթիայում ՔՊ-ն թեւերի է բաժանված եղել. մի թեւն ուղղորդվել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Արման Բարխուդարյանի կողմից, մյուս թեւը՝ ՔՊ-ական պատգամավոր, վարչապետի տիկնոջ ազգական, Մալաթիա-Սեբաստիայի տարածքային կառույցի խորհրդի նախագահ Էդգար Հակոբյանի կողմից: ՔՊ տարածքային կառույցի խորհրդի նախագահի եւ անդամների ընտրությունների ժամանակ կողմերը իրենց ցանկալի մարդկանց ցուցակներ են տվել շարքային ՔՊ-ականներին, որպեսզի ընտրեն, եւ այդ կեղծիքը պատահաբար բացահայտվել է: Պատգամավոր Էդգար Հակոբյանն իր համար է ցանկալի ցուցակ տվել, իսկ թաղապետ Բարխուդարյանը՝ իր: Ու երբ բացահայտվել են կեղծիքները վերստուգիչ հանձնաժողովի անդամների կողմից, որոշվել է կասեցնել կուսակցության գրասենյակի գործունեությունը մինչեւ տարածքային կառույցի խորհրդի նախագահի եւ անդամների նոր ընտրությունները ավելի հարթ պայմաններում: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց այս տեղեկությունը նախ ճշտել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Արման Բարխուդարյանից, սակայն թաղապետը խնդրեց իրեն միայն թաղապետարանին վերաբերող հարցերով անհանգստացնել, կուսակցական հարցերով դիմել կուսակցության ղեկավարությանը: Նա միաժամանակ չիերքեց մեր տեղեկությունները: Զրուցեցինք նաեւ ՔՊ-ի՝ Մալաթիա-Սեբաստիայի տարածքային կառույցի խորհրդի նախագահ, պատգամավոր Էդգար Հակոբյանի հետ, որն ասաց. «Ես նման բան չգիտեմ, որ լուծարվել է, ես տարածքային կառույցի խորհրդի նախագահն եմ եղել, իմ պաշտոնավարելու ժամկետը լրացել է, հավանաբար դրա համար էլ տեղյակ չեմ: Տարածքային կառույցի խորհրդի նախագահի եւ անդամների ընտրություններ պետք է լինեն, բայց հետաձգվել են»: Կուսակցության փոխնախագահ Գեւորգ Պապոյանը չցանկացավ մեկնաբանել կատարվածը: «No comment»,- ասաց նա: Մյուս փոխնախագահ Վահագն Ալեքսանյանն էլ պարզաբանեց հետեւյալը. «Գրասենյակի խորհրդի կազմի ընտրությունները հետաձգվել են, եթե չեմ սխալվում, տեխնիկական պատճառներով. մանրամասներին տեղյակ չեմ: Նախորդ խորհուրդը, որն ընտրվել էր, ժամկետով էր, հավանաբար ժամկետը լրացել է, այլ ապոկալիպտիկ սցենարներ չեն եղել»: Հիշեցնենք, որ սա ՔՊ-ում ընտրությունների կեղծման երկրորդ դեպքն է: Նախորդ տարի՝ հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած ՔՊ վարչության անդամների ընտրությունները նույնպես կեղծվել էին, ինչի հետեւանքով մի շարք ՔՊ-ականներ դուրս էին մնացել վարչության կազմից: Այսպիսով, ստացվում է՝ ՔՊ-ն սեպտեմբերին սպասվող Երեւանի ավագանու ընտրություններից առաջ մնացել է առանց Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի գրասենյակի:

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆՅԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

«Ինչո՞ւ Արցախի հարցում չեն օգտագործվում մեր զինանոցում ունեցած գործիքները: Իշխանությունները որոշել են գնալ, հանձնել Արցախն Ադրբեջանի՞ն: Իրո՞ք: Է՞ս է մեր իշխանությունների կարողությունը, է՞ս է մեր իշխանությունների ֆանտազիան»,- հայտարարել է ՀՀ ԱԳ նախկին նախարար Վարդան Օսկանյանը:

«Այս իշխանությունները մեզ հարիֆի տե՞ղ են դրել, թե՞ իրենք են հարիֆներ: Հավատացե՛ք, որ եթե կամովին հանձնեցինք Արցախն Արբեջանին, մենք կհամարվենք աշխարհի ամենահարիֆ ժողովուրդներից մեկը:

ԽՍՀՄ փլուզումից հետո 50 ինքնորոշման հարց կար միջազգային օրակարգում: Այդ 50-ի գործընթացներից որեւէ ժողովուրդ կամովին չի հրաժարվել այդ իրավունքից: Մենք լինելու ենք առաջինը, որ ինքնակամ հրաժարվելու է այդ իրավունքից եւ հանձնելու է Արցախն Ադրբեջանին:

Ավելին ասեմ՝ այսօր աշխարհում գոյություն ունեն 120-ից ավելի ինքնավար մարզեր 50-ից ավելի երկրներում: Այսօր տարբեր կարգավիճակներ կան, որ կարելի է ունենալ, բայց այդ խնդիրը պետք է դնել, պետք է օրակարգ բերել:

Արցախն Ադրբեջանին հանձնելը խաղաղություն չի կարող բերել: Եթե Փաշինյանը գնաց, ստորագրեց այդ փաստաթուղթը, նա ապագա կոնֆլիկտների սերմեր է ցանելու: Այդ բեռը դնելու է հաջորդ սերունդների վրա:

Մենք չենք կարող Արցախը կորցնել, բայց պետք է լինենք չափավոր, տրամաբանված, պետք է լինենք ճկուն: Այո, պետք է փոխզիջումներ անել, պետք չէ գնալ մաքսիմալիստական պահանջներ դնելու ճանապարհով: Երբ հարցը ձեւակերպվում է չափի մեջ, տրամաբանված, դու, նախ, խուսափում ես պատերազմից, երկրորդ՝ համակրանք ես ստեղծում միջազգային միջնորդների մոտ, եւ դա նպաստում է, որ սեղանի շուրջ կարողանաս հասնել տրամաբանված լուծումների»,- ընդգծեց Օսկանյանը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆՆ ՈՒ «ՀԱՅԱՔՎԵ»-Ն

Ինչպես արդեն հայտնի է, «Հայաքվե» նախաձեռնությունը հանդես է գալիս օրենսդրության փոփոխության դահանջով՝ խիստ դատիժ նախատեսելով Արցախի ինքնորոշումից հրաժարվելու եւ Հայոց ցեղասպանության ճանաչությունը նսեմացնելու համար: «Հայաքվե»-ն տեղի է ունենում միայն քաղաքացիների եւ համայնքապետարանների տարածքում: Ստորագրելու համար դարտադիր է ՀՀ անձնագրի կամ նույնականացման քարտի առկայությունը: ՀՀ բոլոր չափահաս քաղաքացիները, անկախ գրանցման վայրից (ներառյալ Արցախի գրանցմամբ), կարող են քվեարկել ցանկացած ստորագրահավաքի կեսում:

Հայաստանի ԿԸՀ դրական պատասխանից հետո սահմանվել է 60-օրյա ժամկետ (2023թ. հունիսի 19-ից մինչեւ օգոստոսի 19-ը) ստորագրահավաքի կազմակերպման համար (50 000 ստորագրություն): Այնուհետեւ նրանք կդիմեն ԿԸՀ, որը պետք է հաստատի ստորագրությունների իսկությունը, ինչից հետո ներկայացվելու է Ազգային ժողովին:

Հայրենի իշխանությունները փորձում են ամեն կերպ խոչընդոտել գործընթացին:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Հայաքվե» նախաձեռնության անդամ Աննա Կոստանյանն ասաց. «Հանրապետության որոշ շրջաններում հրաժարվել են տարածք տրամադրել նախաձեռնությունը իրականացնելու համար: «Հայաքվեին» խոչընդոտելը սկսվել է հենց ԿԸՀ-ի հաստատումից հետո Երեւանի վարչական շրջաններում, բայց այս խոչընդոտները հաղթահարելուց հետո մենք դեռ ունենք նաեւ համայնքներ՝ Դիլիջանը եւ Ամասյան, որոնք մինչեւ հիմա հաստատում չեն տվել, այլ, հակառակը, մերժել են տրամադրել օրենքով նախատեսված տարածք ստորագրահավաքը իրականացնելու համար:

Մենք դիմել ենք դատախազություն. դատախազության պատասխանի համար նախատեսված էր 10-օրյա ժամկետ, որն այսօր (երեկ-խմբ.) սպառվում է, եւ եթե մինչեւ օրվա վերջ մենք պատասխան չստանանք, կնախատեսենք համապատասխան քայլեր: Եղել են նաեւ խոչընդոտներ, որոնք փաստերով են, բայց վիճարկելի են ապացույցների առումով: Օրինակ՝ դեպք ենք ունեցել, որ Երեւանի վարչական շրջաններից մեկում աշխատակից է հեռացվել աշխատանքից միայն նրա համար, որ մոտեցել է «Հայաքվեի» սեղանին՝ զուտ հետաքրքրվելու համար:

Այդ քաղաքացին հրաժարվել է խոսել այդ մասին, որովհետեւ իր թոռը եւս աշխատում է թաղապետարանում, եւ մարդիկ վախենում են, որ իրեն էլ կազատեն աշխատանքից:

Ասեկոսեների մակարդակով նաեւ տեղեկություններ են տարածվում, որ հրահանգ է իջեցված Երեւանի վարչական շրջանների ղեկավարներին, ղեկավարներից էլ՝ աշխատողներին, որ եթե մասնակից լինեն «Հայաքվե»-ին, ապա խնդիրներ կունենան աշխատանքի հետ կապված: Այս մասով դեռ ապացույցներ չունենք, բայց հետամուտ ենք լինելու գտնել մեկին, ով կվկայի դրա մասին»:

Կոստանյանը նաեւ հավելեց, որ «Հայաքվե»-ին միացողների թիվը օրեցօր ավելանում է, եւ իրենք վստահ են, որ ցանկալի արդյունքին հասնելու են նախատեսվածից ավելի շուտ:

Ստորագրած քաղաքացիների թվի մասին հստակ տեղեկություն կտրամադրեն շաբաթ օրը՝ թվերի ամփոփումից հետո:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՌԱՋԸՆԹԱՑ՝ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ⇨

Կառավարության հերթական նիստի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Վաշինգտոնում վերջերս տեղի ունեցած՝ Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների միջեւ բանակցություններում արձանագրված առաջընթացը շոշափելի չէ, բայց որոշակի առաջընթաց կա:

Վարչապետը նախ նշեց, որ որքան էլ այսօրվա իրադրությունը դժվար է բարոյական, քաղաքական, անվտանգային, էմոցիոնալ առումով, խաղաղության օրակարգի իրացումը այլընտրանք չունի:

«Լեռնային Ղարաբաղի հայության իրավունքների եւ անվտանգության իրացումը պետք է հասցեագրվեն Բաքու-Ստեփանակերտ երկխոսության միջազգային մեխանիզմների շրջանակներում, իսկ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պետք է խաղաղության պայմանագիր ստորագրվի: Վաշինգտոնում վերջերս տեղի ունեցած Հայաստան-Ադրբեջան բանակցություններում արձանագրված առաջընթացը շոշափելի չէ, բայց որոշակի առաջընթաց կա: Առաջիկայում Բրյուսելում նախատեսվում է իմ հանդիպումը Ադրբեջանի նախագահի հետ՝ Եվրամիության խորհրդի նախագահի միջնորդությամբ: Ցավոք, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի տեքստը դեռ պատրաստ չէ ստորագրման:

ՄՈՍԿՎԱՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

Ռուսաստանի Դաշնությունը չափազանց անհանգստացած է Լեռնային Ղարաբաղում հրադադարի ռեժիմի հաճախակի խախտումներով եւ Լաչինի միջանցքի շարունակվող շրջափակմամբ. այս մասին լրագրողների հետ ճեպազրույցում հայտնել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Բաքվին եւ Երեւանին կոչ ենք անում բոլոր հարցերը լուծել բացառապես քաղաքական-դիվանագիտական ճանապարհով, ադրբեջանական կողմին կոչ ենք անում ապաշրջափակել Լաչինի միջանցքը, ապահովել դրանով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների, բեռների անարգել տեղաշարժը՝ քաղաքացիական նպատակներով», - նշել է Զախարովան: Նա նաեւ նշել է, որ ՌԴ խաղաղապահների գործողությունները Ղարաբաղում պայմանավորված կլինեն տեղում իրավիճակի զարգացմամբ եւ եռակողմ պայմանավորվածություններով:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դիվանագետը պնդում է, որ Մոսկվան կապի մեջ է կողմերի հետ տարածաշրջանում լարվածությունը թուլացնելու համար:

ՆԱԽԿԻՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱԱԾ ՄԵԿՈՒՍԱՐԱՆԻՑ

Պաշտպանության բանակի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Միխայել Արզումանյանը «Ժողովուրդ» օրաթերթի միջոցով հայտարարություն է տարածել: Այն ներկայացնում ենք ստորև. «Վերջին շրջանում հաճախակիացել են տարբեր պաշտոնատար անձանց կողմից իմ վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների հրապարակումը, ուստի կարճ ցանկանում եմ անդրադառնալ դրանց:

Նախ ցանկանում եմ նշել, որ Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի հրամանատարությունը ստանձնել եմ 2020 թվականի հոկտեմբերի 27-ին այնպիսի ծայրահեղ ծանր իրավիճակում, երբ թշնամին, արդեն իսկ մի քանի պաշտպանական գոտիներ անցնելով, մոտեցել էր Շուշիի մատույցներին, բանակում տիրում էր քաոսային իրավիճակ, թշնամին անվերապահ գերակայություն ուներ ինչպես օդում, այնպես էլ գետնի վրա:

Առկա իրավիճակում արել եմ առավելագույնը՝ քանակապես եւ սպառազինությամբ բազմակի անգամ գերակշռող թշնամուն դիմագրավելու համար, եւ որոշ դեպքերում էլ լուրջ հաջողություններ ենք ունեցել:

Թշնամին, սակայն, առավել մեծ ուժեր եւ միջոցներ է կենտրոնացրել, որին դիմակայելու ո՛չ մարդկային եւ ո՛չ էլ սպառազինության բավարար ռեսուրս հայկական կողմը չի ունեցել, ինչի մասին քաջատեղյակ է եղել նաեւ քաղաքական ղեկավարությունը:

Իսկ ինձ առաջադրված մեղադրանքներն ուղիղ կապված են կոնկրետ պահերին Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակներով, տարբեր անձանց կողմից Շուշիի հանձնման վերաբերյալ միմյանց հասցեին մեղադրանքներ հնչեցնելու ժամանակագրության հետ:

Հենց այդ նպատակով էլ որպես թիրախ եմ ընտրվել, որպեսզի ինչ-որ անձինք փորձեն իրենց ուղղված մեղադրանքները փաթաթել իմ վրա:

Ինձ ճանաչողները քաջատեղյակ են, որ 18 տարեկանից զենքը ձեռքիս մարտնչել եմ հայրենիքիս համար, ինչպես նաեւ Շուշիի ազատագրումից հետո



առաջինը Շուշի մտած անձանցից եմ հանդիսանում:

Ուստի բացարձակ պատահական չեմ համարում նաեւ, որ ես եմ ընտրվել որպես թիրախ:

Ինչ վերաբերում է այն մեղադրանքներին, թե, իբրեւ, 2020 թվականի սեպտեմբերի 29-ին յուրային ուժերը ազատագրել են Արեգասարի բարձունքը, սակայն հանկարծ ես եմ հայտնվել այնտեղ եւ հրաման տվել, որպեսզի յուրային ուժերը թողնեն գրավված բարձունքը եւ հետ նահանջեն, ապա, նախ, ես նման հրաման տալու իրավասություն չեմ ունեցել, քանզի այդ ժամանակ չեմ հանդիսացել Պաշտպանության բանակի հրամանատարը:

Բացի այդ, եթե դա համապատասխանում է իրականությանը, ապա հետեւյալ տրամաբանական հարցերն են ծագում.

-եթե Արեգասարի բարձունքն իրոք գրավված է եղել յուրային ուժերի կողմից, եւ եթե սեպտեմբերի 29-ին ես հրամայել եմ հանձնել այդ գրավված բարձունքը, ապա ինչո՞ւ դեռեւս այն ժամանակ դրա համար պատասխանատվության չեմ ենթարկվել,

- եթե ես նման հանցավոր արարք եմ կատարել, ապա դրանից 1 ամիս անց ինչո՞ւ եմ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի կողմից նշանակվել Պաշտպանության բանակի հրամանատար,

- Արեգասարի բարունքը հանձնելու հրաման տված անձն ինչպե՞ս կարող էր նման վստահություն վայելել զինված ուժերի հրամանատարության եւ գերագույն գլխավոր հրամանատարի մոտ:

Որպեսզի հանկարծ ավելորդ մեկնաբանություններ չլինեն, թե, իբրեւ, այդ մասին զինված ուժերի հրամանատարությունը եւ գերագույն գլխավոր հրամանատարն այն ժամանակ չեն իմացել, ցանկանում եմ նշել, որ զինվորական գործի հետ փոքր-ինչ առնչություն ունեցող ցանկացած անձ կհաստատի, որ չի կարող նման կարեւորության բարձունքը հակագրոհով գրավելու օպերացիա մշակվի, գրավվի այն, եւ այդ մասին զինված ուժերի հրամանատարությունը չիմանա:

Նույնկերպ հնարավոր չէ, որ զինված ուժերի հրամանատարությունը չիմանա, թե ինչպես գրավված բարձունքը նորից անցավ թնամուն:

Ամեն քայլը սահմանված կարգով զեկուցվում է՝ ըստ ենթակայության:

Իսկ մեկ ամիսը շատ լուրջ ժամկետ է, որ զինված ուժերի հրամանատարությունը եւ ազգային անվտանգության ծառայությունը չիմանային դրա մասին, իսկ իմանալով հանդերձ էլ ես նշանակվեի ՊԲ հրամանատար:

Ինչ վերաբերում է մեղադրանքների հիմնավորվածությանը, ապա ակնհայտ է, որ դրանք հաստատող ապացույցներ առկա չեն եւ չեն կարող լինել:

Հենց դրա համար էլ դատարանին միջնորդել ենք հրապարակային, դռնբաց դատաքննություն իրականացնել, որպեսզի հասարակությունը հստակ պատկերացնի, թե ինչ է իրականում տեղի ունեցել, եւ ինչու են ինձ նման շինծու մեղադրանքներ առաջադրվել:

Իսկ այն բանից հետո, երբ ՀՀ Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի նիստում մի քանի օր շարունակ հրապարակային ներկայացվեցին պատերազմի ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը, առավել եւս անհասկանալի է մնում, թե ինչու է իմ վերաբերյալ քրեական գործը քննվում փակ դռների հետեւում:

Հավանաբար որպեսզի այդ դռներից դուրս շահագռգիռ անձինք կարողանան ազատորեն ներկայացնել իրենց հորինվածքները:

Ես, ի տարբերություն ինձ մեղադրողների, երբեք նույնիսկ կյանքս չեմ խնայել հայրենիքիս համար, ինչպես նաեւ ժամանակը ցույց կտա, որ առկա իրավիճակում եւս առավելագույնն եմ կատարել հայրենիքս պաշտպանելու համար»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐԱԹԵՐԹԱԿԱՆ ԴԵՊՔ

ԲԺԻՇԿՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ

Լարված իրավիճակ է ստեղծվել Երեւանում: Նոր Արեւում գտնվող «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոնի մոտ են հավաքվել Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի մի խումբ բնակիչներ, որոնք արդարացիորեն պահանջում էին հստակ պատասխան, թե ինչու են նշված բժշկական կենտրոնի բժիշկները փորձել թաքցնել իրենց նորածնի մահը:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ընտանիքի մայրը աղջիկ է ունեցել նշված ծննդատանը, եւ սկզբից ասել են, որ երեխան առողջ է, սակայն որոշ ժամանակ անց հարազատները տեղեկացել են, որ երեխան, ցավոք, մահացել է: Բժշկական կենտրոնից մահացածի հարազատներին հրաժարվել են պատասխան տալ, դրա փոխարեն ահազանգել են ՀՀ ներքին գործերի նախարարության Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն: Այս պահին նշված կենտրոն են ժամանել ՀՀ ՆԳՆ Ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 1-ին գումատակի 3-րդ վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Արամ Դադոյանի, վաշտի հրամանատար Գեւորգ Թորոսյանի գլխավորությամբ:

Տեղում ծառայություն են կատարում նույն վաշտի ավագ պարեկ Վահե Հարությունյանն ու կրտսեր պարեկ Վահե Մուրադյանը:

Ֆոտոլրագրողի հետ զրույցում երեխայի հարազատները, որոնք հրաժարվեցին տեսախցիկի առաջ խոսել, ասում էին. «Մենք միայն ուզում ենք հստակ պատասխան, թե ոնց եղավ, որ ասացին՝ երեխան առողջ է, սակայն հետո մենք իմանում ենք, որ մահացել է: Մենք պահանջում ենք՝ արդար նախաքննություն իրականացնեն: Մենք գիտենք, որ երեխային այլեւս հետ չենք բերի, սակայն թող մեղավորը կամ մեղավորները պատասխանատվության ենթարկվեն, քանի որ վստահ ենք՝ երեխան մահացել է բժիշկների ոչ ճիշտ մոտեցման արդյունքում:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԱՆՑ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 18-ին՝ կեսգիշերն անց, քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողները Ալավերդի քաղաքի Սանահին Կայարան թաղամասի շենքերից մեկում հայտնաբերել ու ձերբակալել են սպանության եւ ապօրինի կերպով զենք կրելու մեղադրանքներով 2021 թվականից հետախուզվող 29-ամյա մի երեւանցու:

Հայտնաբերված երիտասարդին իրավապահները երկու տարի է՝ փնտրում էին՝ ԱԺ նախկին պատգամավոր Արտյուշ Սիմոնյանի եւ քրեական հեղինակություն Արթուր Ղազարյանի՝ քանաքեռցի Տույի սպանության գործով: Իրավապահները չէին գաղտնազերծել նրա ով լինելը:

Եվ, ահա, «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հայտնաբերված տղամարդը Տիգրան Հարությունյանն է, որին մեղադրանք է առաջադրվել, որ նա իր ազգականներ՝ ԱԺ նախկին պատգամավոր Արտուշ Սիմոնյանի, վերջինիս որդիներ Վլադիմիր Սիմոնյանի, Հովհաննես Սիմոնյանի ու Հակոբ Սիմոնյանի, նրանց մտերիմ Արսեն Ալեքսանյանի հետ, նախնական համաձայնության գալով խմբի կազմում, Արթուր Ղազարյանին՝Տույին, Արայիկ Խաչատրյանին, Արթուր Աշոտի Բորյանին, Գեւորգ Արթուրի Ջաբուրյանին եւ Գեղամ Արտուշի Ղազարյանին սպանելու՝ ապօրինաբար կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ 2021 թվականի նոյեմբերի 11-ին՝ ժամը 02:36-ի սահմաններում, Երեւան քաղաքի Քանաքեռ 16-րդ փողոցի 16 Ա տան բակում վերջիններիս հետ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ նախապես ապօրինի կերպով ձեռք բերված եւ իրենց մոտ ապօրինի կերպով պահվող հրազենով, փոխլրացնելով միմյանց գործողությունները, ատրճանակներով կրակել եւ ապօրինաբար կյանքից զրկել են Արթուր Ղազարյանին, Արայիկ Խաչատրյանին, Արթուր Բորյանին, իսկ Գեղամ Ղազարյանին եւ Գեւորգ Ջաբուրյանին պատճառել են հրազենային վնասվածքներ եւ վերջիններիս սպանությունն ավարտին չեն հասցրել իրենց կամքից անկախ՝ Գ. Ղազարյանի եւ Գ. Ջաբուրյանի փախուստի դիմելու հանգամանքով պայմանավորված:

Ի դեպ, 2021 թվականի նոյեմբերի լույս 11-ի գիշերը՝ ժամը 2.45-ից հնչած կրակոցների հետեւանքով սպանվեց նաեւ ԱԺ նախկին պատգամավոր 61-ամյա Արտուշ Սիմոնյանը, որի որդիներն այս պահին կալանավորված են, եւ գործը դատարանում է:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 4-ից 6-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 35 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ԲԱՆԱԿ ՈՒՂԱՐԿՈՂԸ

Տավուշի մարզպետարանից հայտնում են, որ հուլիսի 4-ին տեղի է ունեցել 2023 թվականի ամառային զորակոչի Տավուշի մարզային զորակոչային հանձնաժողովի առաջին նիստը, որը վարել է Տավուշի մարզպետ, զորակոչային հանձնաժողովի նախագահ Հայկ Ղալումյանը: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշումներով 2019թ. սեպտեմբերի 12-ին Իջևան համայնքի ղեկավարի պաշտոնակատար, 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը անհայտ պատճառներով ժամկետային զինծառայություն չի անցել, 1990-ական թվականների ազատամարտին չի մասնակցել: 2020թ. հոկտեմբերի 22-ին՝Նիկոլ Փաշինյանի հայտնի կոչից հետո առաջնագիծ մարտնչելու մեկնելու նպատակով Հայկ Ղալումյանը ստեղծել է «Իջևան» կամավորական ջոկատը, որի անդամները մոտ մի շաբաթ Տավուշի մարզի անտառներում մարզվելուց հետո ո՛չ Արցախ են մեկնել, ո՛չ էլ Տավուշի սահմանագոտի, սակայն ջոկատի անդամները դրա դիմաց պետական բյուջեից երեք ամսվա աշխատավարձ են ստացել՝ մեկ լրիվ եւ երկու կիսատ ամսվա հաշվարկով:

ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ՝ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՑ

«Վեոլիա ջուր» ՓԲԸ ներկայացուցիչը 2022թ. մայիսի 16-ին Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հայցադիմում է ներկայացրել՝ ընդդեմ «ՀՀ Տավուշի մարզի Այրումի համայնքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի, 2 միլիոն 389 հազար 900 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջով: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի՝2022թ. հունիսի 3-ի որոշմամբ՝հայցադիմումն ընդունվել է վարույթ: Այդ դատարանի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մերժվել է: 2023թ. հունվարի 24-ին կայացած նախնական դատական նիստի ժամանակ դատարանն արձանագրային որոշմամբ կատարել է պատասխանող կողմի փոփոխություն՝ իրավահաջորդության հիմքով՝ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքին ներառելով որպես պատասխանող կողմ: 2023թ. փետրվարի 21-ին հայցվոր ընկերության ներկայացուցչի կողմից դատարան են մուտքագրվել առարկություններ Նոյեմբերյանի համայնքապետարանի կողմից ներկայացրած դիրքորոշման վերաբերյալ: 2023թ. ապրիլի 5-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել ապացուցման պարտականությունը բաշխելու մասին եւ գործին մասնակից անձանց կողմից ապացույցներ եւ դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ դատարան ներկայացելու համար տրամադրել է ժամկետ՝ մինչեւ հաջորդ դատական նիստը՝2023թ. հունիսի 6-ը: Հունիսի 6-ին Տավուշ մարզի առաջին ատյանի դատարանի Դիլիջանի նստավայրում դատավոր Նանա Դալլաքյանը որոշել է սույն քաղաքացիական գործով նախնական դատական նիստն ավարտել եւ գործով նշանակել դատաքննություն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում ներդրվել են բժշկական նոր տեխնոլոգիաներ, որոնք նպաստում են սրտանոթային հիվանդությունների ավելի հեշտ եւ արդյունավետ բուժմանը: Սոցիալապես կարեւոր գլխավոր խնդիրը նոր տեխնոլոգիաների տարածումն է Հայաստանի բոլոր մարզերում, եւ այդ գործընթացն արդեն մեկնարկել է: Այս մասին Հայաստանի 6-րդ միջազգային բժշկական կոնգրեսի շրջանակներում ասաց սրտանոթային հիվանդությունների ռենտգենէնդովասկուլյար ախտորոշման եւ բուժման մասնագետների ռուսական գիտական հանրության նախագահ Բագրատ Ալեքյանը:



Ինչպես նշեց Ալեքյանը, ներդրվել է սրտի փականային հիվանդություններով հիվանդների բուժման նոր միջոց: Մինչեւ վերջերս փականի փոխարինման վիրահատությունն իրականացվում էր բաց եղանակով՝ հերձադանակով եւ անզգայացմամբ, սրտի ամբողջական կանգով եւ արյան արհեստական շրջանառությամբ:

«Այսօրվա բժշկության ձեռքբերումների շնորհիվ՝ հնարավոր է դարձել բուժել սրտի շատ հիվանդություններ տրանս-կաթետերային եղանակով, այսինքն՝ առանց անզգայացման եւ առանց հերձադանակի: Այս եղանակով կարելի է վիրահատություն կատարել 80, 90 եւ նույնիսկ 100 տարեկան հիվանդների մոտ: Հայաստանում կատարվել են առաջին քայլերն, ու կատարվել են առաջին նման վիրահատությունները: Ես հույս ունեմ, որ դրանց ծավալը կավելանա եւ կկրկնապատկվի»,-ասաց Ալեքյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ նա հիշեցրեց, որ Հայաստանում Stent for life ծրագրի ներդրմանը գործուն մասնակցություն է ունեցել առողջապահության նախկին նախարար Արմեն Մուրադյանի հետ, եւ այսօր այդ համակարգն աշխատում է, եւ Հայաստանը մեկ միլիոն բնակչության համար կատարում է ավելի քան երեք հազար ստենտավորում: «Սա պրակտիկ եվրոպական բարձրագույն մակարդակ է, եւ ծրագիրը կունենա իր շարունակությունը»,-ասաց նա: Մյուս շատ կարեւոր պետական ծրագիրը, որն արդեն մեկնարկել է Հայաստանում, իշեմիկ ինսուլտով հիվանդների բուժումն է: «Սա մի ծրագիր է, որն արդեն իրականացվում է, բայց պետք է այնպես անել, որ Հայաստանի բոլոր մարզերում հասանելի լինի այդ օգնությունը, ինչն այսօր սոցիալական նշանակություն ունեցող գլխավոր խնդիրներից մեկն է:

Կարծում եմ՝ շատ կարեւոր է, որ այսօր Հայաստանում 6-րդ կոնգրեսի աշխատանքներին մասնակցող բժիշկները կլսեն այս նոր տեխնոլոգիաների մասին: Շատ սերտ կապեր են ստեղծվել արեւմտյան սփյուռքի եւ Հայաստանի միջեւ, որոնք նպաստում են մեր երկրում այդ բոլոր ուղղությունների զարգացմանը»,-հավելեց Բագրատ Ալեքյանը:

Նշենք նաեւ, որ Բագրատ Ալեքյանը՝որպես խոսնակ, մասնակցում է Հայաստանի 6-րդ միջազգային բժշկական կոնգրեսին: Նրա զեկույցի թեման է՝ «Սրտանոթային հիվանդությունների տրանսկաթետերային բուժման ընթացիկ նվաճումները. փականի հիվանդություններ՝ մեծահասակների մոտ»: Բագրատ Ալեքյանի խոսքով՝ 6-րդ բժշկական համագումարի (6imca) նպատակն է ցույց տալ այն հնարավորությունները, որոնք գոյություն ունեն աշխարհում բժշկության ոլորտում: Նիստի ընթացքում ելույթ են ունենում տարբեր ուղղությունների առաջնորդներ, հայկական Սփյուռքի ներկայացուցիչներ, որոնք զեկուցում են բժշկության վերջին ձեռքբերումների մասին:

ԹՈՇԱԿՆԵՐ

ՆՇՈՒՄ Է՝ ԲԱՆԿԵՐՆ ԵՆ ՄԵՂԱՎՈՐ

Հուլիսի 1-ից բարձրացված կենսաթոշակը համապատասխանում է նվազագույն պարենային զամբյուղին: Այս մասին հուլիսի 6-ին՝ կառավարության նիստի ժամանակ, հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Ըստ նրա՝ մեր երկրի պատմության մեջ առաջին անգամ ունենք մի իրավիճակ, երբ նվազագույն կենսաթոշակն իր չափով համապատասխանում է Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից սահմանված նվազագույն պարենային զամբյուղին:

«Սա նշանակում է, որ այդ մեթոդաբանությամբ մեր կողմից տրվող բոլոր թոշակառուներն իրենց նվազագույն պարենային կարիքները կարող են հոգալ: Առավել եւս, եթե մեր սիրելի կենսաթոշակառուներն օգտվում են հետվճարի ծրագրից, ապա ավելի բարձր ցուցանիշ կունենան»,- հայտարարեց նա:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Աննա Ժամկոչյանն իր հերթին նշեց, որ հուլիսի 4-ին իրենց կողմից բոլոր վճարումները, փոխանցումները կատարվել են բոլոր բանկերին եւ Հայփոստին:

«Թոշակներն ու նպաստները տալիս ենք նույն ամսում, հետեւաբար մարդիկ ստանում են հուլիսի՝ արդեն իսկ բարձրացված դրույքաչափերով կենսաթոշակները»,- ընդգծեց նա:

Փաշինյանը միաժամանակ նշեց, որ շարունակում են բանկերի հետ կապված ահազանգեր ստանալ, որ շատ թոշակառուներն անկանխիկ են ստանում գումարը, սակայն ամսվա վերջում հետվճար չեն ստանում:

Ըստ վարչապետի՝դրա պատճառն այն է, որ դեռ կան բանկեր, որոնք որոշել են չմասնակցել սոցիալական այդ ծրագրին, ինչը շատ վատ է եւ անհասկանալի:

Նշենք, որ 2023 թ. հուլիսի 1-ից միջին ամսական եւ նվազագույն կենսաթոշակների, ինչպես նաեւ ծերության, հաշմանդամության եւ կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը բարձրացել են: Ըստ այդմ՝ նվազագույն կենսաթոշակի չափը սահմանվել է 36,000 դրամ՝ 31,600 դրամի փոխարեն, աշխատանքային կենսաթոշակի չափը սահմանվել է 24,000 դրամ՝ 21,000 դրամի փոխարեն, զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը սահմանվել է 1,750 դրամ՝ 1,600 դրամի փոխարեն:

Կառավարության ծրագրի համաձայն՝ պետական կենսաթոշակների չափերը մինչեւ 2026 թվականը պարբերաբար կբարձրացվեն:

● *Անցած 2 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 6 ՃՏՊ. 6 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎՏԲ – ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿ

«ՎՏԲ-Հայաստան» բանկը բացել է կորպորատիվ հաճախորդների սպասարկման նոր գրասենյակ:

«ՎՏԲ-Հայաստան» բանկը Երեւան քաղաքի կենտրոնում նոր ժամանակակից ձեւաչափով բացել է իրավաբանական անձանց սպասարկող «Մոսկվա» մասնաճյուղը: Գրասենյակը սպասարկելու է բանկի գրեթե 1000 կորպորատիվ հաճախորդների՝ տնտեսության տարբեր ոլորտներից: Տարեսկզբից նրանց թիվն աճել է 15%-ով:

Նոր մասնաճյուղում հաճախորդներին հասանելի են հաշվարկադրամարկղային ծառայություններ, վարկային եւ խնայողական պրոդուկտներ, վճարային բիզնես - քարտեր եւ «Բանկ-հաճախորդ» օնլայն ծառայությունը՝ հիմնական ֆինանսական ծառայություններին շուրջօրյա հասանելիությամբ:

Գրասենյակի դիզայնը եւ աշխատատեղերը նախագծված են ժամանակակից ոճով եւ պլանավորված են այնպես, որպեսզի ապահովեն անհատական մոտեցում հաճախորդին եւ նրա հարմարավետությունը սպասարկման բոլոր փուլերում. դրա համար նախատեսված են հանդիպումների հատուկ սենյակներ: Այցելուներին հասանելի է առանձնացված կայանատեղի:

«Հաճախորդների բարձրակարգ սպասարկումը, արդյունավետ բիզնես գործընթացների կառուցումը եւ բիզնես պահանջների նկատմամբ ուշադրությունը կորպորատիվ սեգմենտում մեր աշխատանքի հիմնական առաջնահերթություններն են: Այսօր «Մոսկվա» մասնաճյուղը սպասարկում է միջին եւ փոքր բիզնեսի տարբեր ոլորտների շուրջ 1000 ընկերություններ, այս տարվա սկզբից վերջիններիս աճը կազմել է մոտ 15%: Մեր նոր գրասենյակի հարմարավետ միջավայրում հաճախորդները կարող են ստանալ բանկային ծառայությունների լայն շրջանակ», - նշել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի - տնօրինության նախագահի Ժ/Պ Արա Ավագյանը:

«Մոսկվա» մասնաճյուղը գտնվում է ք.Երեւան, Արամի 4/3, շենք 59 հասցեում: Հաճախորդների սպասարկումն իրականացվում է աշխատանքային օրերին՝ ժամը 9:30-17:00-ն:

«ՎՏԲ-Հայաստան» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (1)

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ ք., Սպանդարյան փողոց, 25 հասցեում գտնվող 135,5 ք.մ. բնակելի տուն, 24,6 ք.մ.թոնրատուն, 26,2 ք.մ. ավտոտնակ, 10,5 ք.մ. մառան, 2,7 ք.մ. զուգարան, 21,8 ք.մ. պահեստ, 18 ք.մ. լողավազան, 25,6 ք.մ. ծածկ, 9,4 ք.մ. /4,8 խ.մ./ պարիսպ եւ 0,0828 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 25500000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք., Պ. Սեւակի փողոց, 47 շենք, 12 հասցեում գտնվող 41,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 5400000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 24.07.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 24.08.2023թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- Շիրակի մարզ, համայնք Արթիկ ք., Սասունցի Դավթի փողոց, 20 շենք, 20 հասցեում գտնվող 83,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 7000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 24.07.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 24.08.2023թ.-ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք. Երեւան, Արաբկիր, Բաբայան փողոց, 11/1 հասցեում գտնվող 0,07 հա հողամաս (առկա է 20,96 ք.մ. ինքնակամ շինություններ): Լոտի մեկնարկային գինը՝ 330000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 24.07.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՂԹԱՆԱԿ

ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿ՝ ՆՈՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ

Օրերս Մոսկվայում տեղի ունեցավ խառը մարտարվեստի հերթական մրցաշարը՝ MMA SERIES 70 All Stars Moscow-ն, որտեղ հայ մարզիկ Ռաֆայել Աբրահամյանը տոնեց հերթական հաղթանակը:

Նախքան մենամարտը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Ռաֆայելը կիսվել էր, թե ինչ ակնկալիքներով է պատրաստվում մեկնել երկրից. «Շատ հետաքրքիր մարտ է մեզ սպասվում միանշանակ, որովհետեւ հենց ես եմ ուզել, որ այն կայանա: Մրցակիցս սովորական մեկը չէ՝ թուրք, ադրբեջանցի կամ ուկրաինացի չէ, ռուս է, բայց եւս թեժ է լինելու: Դմիտրիյ Յակովլեւը իմ աչքի առաջ նախ հաղթել է Ֆրանսիայից ժամանած իմ ընկերոջը՝ Հովիկ Ջախարյանին, որից հետո ես դուրս եկա ռինգ եւ իրեն նետեցի ձեռնոց՝ ասելով, որ ես ուզում եմ քեզ հետ մենամարտել՝ լուծելով ընկերոջս վրեժը: Իմ այս հայտարարությունից հետո Յակովլեւի ընկերը՝ Կոնստանտին Չերեդնիչենկոն, ինձ ձեռնոց նետեց: Ես մենամարտում եմ Չերեդնիչենկոյի հետ՝ նոկաուտով հաղթելով նրան՝ խոստանալով, որ հաջորդը լինելու է իր ընկերը՝Յակովլեվը, որը հաղթել էր իմ ընկերոջը՝Հովիկին: Այս ամենից հետո Հայաստանում տեղի է ունենում մրցաշար, որտեղ ես պետք է մրցեի Ղազախստանը ներկայացնող թուրք մարզիկի՝ Էլդար Կախորմանովի հետ, իսկ Յակովլեվը՝ իմ մյուս ընկերոջ՝ Գեղամ Վարդանյանի: Ցավոք, այս մարտում եւս Յակովլեվը հաղթած է դուրս գալիս: Այսինքն՝ ինքը հաղթել էր իմ երկու հայ ընկերներին, իսկ ես՝ իր մեկ ընկերոջը»,- նշել էր նա:

Մարզիկի խոսքով՝ Լիգան այս պատմությունից հետո որոշում է, որ Ռաֆայելի եւ Յակովլեվի մարտը եւս հետաքրքիր ու դիտարժան կլինի, եւ առաջարկում է մրցել: Բուքմեյքերական ընկերությունները նույնիսկ հավանական հաղթանակը հավասար էին համարում: Ռաֆայելն ինքն էլ մեզ հետ զրույցում փաստեց, որ արժանի մրցակից է իրեն բաժին ընկել, ու բավական լարված մարտ է սպասվում առաջիկայում: Արդեն հուլիսի 1-ին տեղի ունեցած մրցաշարում Ռաֆայել Աբրահամյանը վստահ հաղթանակ է տանում ռուս մարզիկի նկատմամբ՝ լուծելով երկար սպասված մարզական վրեժը ընկերների պարտության համար, 2-րդ ռաունդում ավարտելով մարտը: Մրցաշարի հաղթական ավարտից հետո Ռաֆայելը, «Ժողովուրդ» օրաթերթին վստահելով բացառիկ մանրամասները, մարտից ու իր զգացողություններից պատմում է. «Ես պարզապես իրավունք չունեի պարտվելու, քանի որ նա իմ ընկերներին էր հաղթել, եւ այս մենամարտը իր համար շատ մեծ շանս էր եւս մեկ անգամ իր ուժը ցուցադրելու համար: Ես հստակ գիտեի՝ ինչի համար եմ իր հետ օկտագոն մտնում: Երբ հայտնվեցինք մի հարթակում, եւ ճաղավանդակը փակվեց, իմ պատասխանատվությունն ավելի մեծացավ, քանի որ ես գիտեի, թե ինչքան մարդ է սպասում այս ռեւանշին»,- հավելեց նա:

Մարզիկի խոսքով՝ թե՛ ինքը եւ թե՛ մրցակիցն ունեին լարվածություն, որը, սակայն, իր մոտ վերածվեց ուժի: Պետք չէր մրցակցին թուլություն ցույց տալ, այլ, հակառակը, սառը գլխով ճիշտ մարտավարություն էր պետք ընտրել: Հոգեբանական ու ֆիզիկական այն պատրաստվածությունը, որը մարզիկն ունեցել ու ցույց է տվել օկտագոնում, եղել է հենց այնպիսին, ինչպիսին ինքն է պատկերացրել: Ռաֆայելի խոսքով՝ իրեն թե՛ ֆիզիկապես եւ թե՛ հոգեպես պատրաստել է մարզիչը՝ Գոռը: Նա այն եզակի մարդկանցից է եղել, որն աջակցել է մարզիկին ու պատրաստել միայն հաղթանակի. «Այն, ինչ պատրաստել էինք մարզիչիս հետ Յակովլեվի համար այս ամիսների ընթացքում, ես կարողացա ցույց տալ իրեն: Հատուկ մտածված տեխնիկայի շնորհիվ կարողացա հաղթանակի հասնել: Այժմ երջանիկ եմ, որ կարողացա հաղթել ու իմ հաղթանակով Հայաստան բերել նոր մրցաշար»:

ArmLur.am-ի բացառիկ տեղեկություններով՝ սեպտեմբերի 2-ին Երեւանում՝ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, տեղի կունենա խառը մարտերի մրցաշար, որն անցկացնելու է միջազգային Լիգան: Թե ովքեր կլինեն մասնակիցներն այս մրցաշարին, դեռեւս քննարկման փուլում է:

Հիշեցնենք, որ սա այս սպորտաձեւում երկրորդ միջազգային մրցաշարն է, որն անցկացվելու է Հայաստանում Ռաֆայել Աբրահամյանի հաղթական ելույթից հետո:

ՇՈՈՒ-ԲԻԶՆԵՍ

ՀԱՄԲՈՒՅՐԻ ԱՌԱՋԱՐԿ՝ ՏԻԳՐԱՆՅԱՆԻՆ

Լրագրող, դերասանուհի Արուս Տիգրանյանն օրերս դերասանուհի Հերմինե Ստեփանյանի HerMine dialog հաղորդման հյուրն էր, որտեղ պատասխանել է մի քանի հարցի եւ առաջին անգամ խոսել է այն մասին, թե դերասաններից ով է ցանկացել համբուրվել իր հետ:

Հարցին, թե կա արդյոք պատմություն, որի մասին ոչ ոք չգիտի, Արուս Տիգրանյանն ասաց, որ կա մի պատմություն, որը նաեւ քննարկել է իր հոգեբանի հետ:

«Ես պատրաստում էի ռեպորտաժ «Լավ երեկո» հաղորդման շրջանակներում «Արտավազդ» մրցանակաբաշխությունից: Այնտեղ հանդիպում եմ Սամվել Թադեւոսյանին, որը «Կյանք ու կռիվ» ֆիլմի դերասաններից է, եւ անպայման ուզում եմ մի քանի հարց տալ իրեն: Նա ինձ ասում է, որ ես մեկն եմ, որն ուզում է ինտելեկտուալ թվալ, բայց չի ձգում»,-ասում է Արուս Տիգրանյանը:

Վերջում Արուս Տիգրանյանը հավելում է, որ դերասանն իրեն առաջարկել է համբուրվել, եւ բացասական պատասխան լսելով՝ ասել է, որ լրագրողն ունի հետամնաց 80-ականների մոտեցում:

ՏՈՆՈՒՄ ԷՐ ԻՐ 30–ԱՄՅԱԿԸ

Ռուսաստանաբնակ հայ դիմահարդար Գոհար Ավետիսյանն օրեր առաջ տոնում էր իր 30 ամյակը:

Նա ինստագրամյան իր էջում հրապարակել է լուսանկարներ ծննդյան օրվանից, որտեղ հարազատների եւ ընկերների հետ տոնում էր իր տարեդարձը, եւ երեւում է, թե ովքեր էին ներկա շոու բիզնեսի ներկայացուցիչներից:

Ներկա էր Artik & Asti խմբի երգչուհի Սեվիլը եւ երգիչ Արկադի Դումիկյանը:

Դիմահարդարը տեսանյութ էր տեղադրել Արկադի Դումիկյանի հետ եւ գրառել. «Հետո եկավ թագավորը եւ պայթեցրեց պարահրապարակը»:

Հիշեցնենք, որ Գոհար Ավետիսյանն ունի նոր սիրեցյալ, որի մասին ուզում է խոսել երեւի ամուսնությունից հետո:

ԻՆԵՍԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԲՐԵՆԴԸ ՓԱԿՎԵՑ

Փակվել է սպարապետ Վազգեն Սարգսյանի եղբոր՝ Արմեն Սարգսյանի դստեր՝ Նոնա Սարգսյանի NoSa հայկական բրենդը ներկայացնող սրահը: Այն ներկայացնում էր նորածիններից մինչ 12 տարեկան աղջիկների hand made տոնական զգեստներ՝ եզակի օրինակներով:

Նշենք, որ NoSa խանութ-սրահի փակման մասին Նոնա Սարգսյանը հայտնել է ինստագրամյան իր էջում եւ հուզիչ գրառում կատարել. «Im poqrik axjik mnas barov. ՆՈՍա բրենդը այեւս չի գործում Հայաստանում: Շնորհակալ ենք մեր սիրելի հաճախորդներին անցած հետաքրքիր ճանապարհի համար»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՆԱՊՈԼԻԻ» ԽԱՂԱՑՈՂԸ՝ «ԲԱՎԱՐԻԱՅՈՒՄ»

Իտալիայի չեմպիոն «Նապոլիի» հարավկորեացի պաշտպան Կիմ Մին Ջեն բուժզննում է անցել Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» համար. հաղորդում է twitter.com/fabrizioromano-ն:

Տեղափոխության մասին պաշտոնական հայտարարությունը կլինի առաջիկայում: «Բավարիան» Կիմ Մին Ջեի տրանսֆերի համար կվճարի 50 միլիոն եվրո եւ նրա հետ կկնքի 5 տարվա պայմանագիր: Ֆուտբոլիստի տարեկան աշխատավարձը կկազմի 12 միլիոն եվրո:

Իտալիայի ավարտված առաջնությունում Կիմ Մին Ջեն մասնակցել է 35 հանդիպման, խփել է 2 գոլ, կատարել 2 գոլային փոխանցում:

ՏԱՐԿԵՏՈՒՄ՝ ՄԱՐԶԻԿԻՆ

Կառավարությունն իր հուլիսի 6-ի նիստում որոշեց սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող Սամվել Ավետիսի Գասպարյանին տարկետում տալ պարտադիր զինծառայության 2023-ի ամառային զորակոչից:

Նշենք, որ 26-ամյա գյումրեցի Սամվել Գասպարյանը ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի 2022 թվականի առաջնության 2-րդ մրցանակակիր է:

Իսկ արդեն այս տարվա ապրիլին Սամվել Գասպարյանը ծանրամարտի Եվրոպայի առաջնության մինչեւ 109 կգ քաշային կարգում երկամարտի 395 կգ արդյունքով նվաճեց Եվրոպայի չեմպիոնի կոչումը: Նույն քաշային կարգում հանդես եկող մեր մյուս ծանրորդը՝ Պետրոս Պետրոսյանը, երկամարտի 379 կգ արդյունքով զբաղեցրեց 3-րդ տեղը:

ՎԱՃԱՌՔ՝ ՍՊԵՐՑՅԱՆԻ ՏՐԱՆՍՖԵՐԻՑ ԱՌԱՋ

Ամստերդամի «Այաքսը» շարունակում է աշխատանքը ռուսական «Կրասնոդարի» եւ Հայաստանի հավաքականի 23-ամյա կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանի տրանսֆերի ուղղությամբ: Հոլանդական ակումբն այդ տրանսֆերն իրականացնելու համար պետք է վաճառի մի քանի խաղացողների. հաղորդում է VoetbalNieuws-ը:

Նիդերլանդների ավարտված առաջնությունում «Այաքսը» գրավել է երրորդ տեղը եւ հանդես կգա Եվրոպայի լիգայի որակավորման փուլում: Չեմպիոնների լիգայի ուղեգիր չնվաճելու հետեւանքով «Այաքսը» 45 միլիոն եվրո քիչ կստանա:

«Կրասնոդարը» Էդուարդ Սպերցյանի տրանսֆերից ակնկալում է 12 միլիոն եվրո:

Ռուսաստանի ավարտված առաջնությունում Էդուարդ Սպերցյանը մասնակցել է 28 հանդիպման, խփել 10 գոլ, կատարել 12 գոլային փոխանցում. լավագույնն է այս ցուցանիշով:

Ռուսաստանի գավաթի 13 խաղում Սպերցյանը խփել է 4 գոլ, կատարել 2 գոլային փոխանցում:

● Հունիսի 7-ին Երեւանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Եթե անկեղծ խոսենք» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1500-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ՀԱՐԿ

ՀԱՐՑ. Հողի հարկի եւ գույքահարկի համար ի՞նչ արտոնություններ են գործում:

Ռաֆայել Նալբանդյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հողի հարկից ազատվում են «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անձինք նույն հոդվածով նախատեսված դեպքերում: Հողի հարկից 50 տոկոսի չափով ազատվում են «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված անձինք նույն հոդվածով նախատեսված դեպքերում: Համայնքի ավագանու սահմանած արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ տարվա համար հողի հարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների 10 տոկոսը:

Գույքահարկի գծով արտոնությունները սահմանված են «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով:

ՀՀ ՏԿԵ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համայնքի ավագանու սահմանած արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ տարվա համար գույքահարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների 10 տոկոսը: Հաշվետու տարվա ընթացքում արտոնություն ունեցող գույքահարկ վճարողը գույքահարկը վճարելուց ազատվում է այն ամսվա 1-ից, երբ առաջացել է արտոնության իրավունքը: Հաշվետու տարվա ընթացքում գույքահարկի արտոնությունը դադարելու դեպքում գույքահարկը հաշվարկվում է արտոնության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՀԱՐՑ. Եթե որեւէ տարվա ընթացքում հայտարարատու պաշտոնը դադարեցնելուց հետո անձը կրկին ստանձնում է հայտարարատու պաշտոն, ի՞նչ հայտարարագիր է ներկայացնում:

Գեւորգ Սարգսյան (46 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե հայտարարատու պաշտոնատար անձը պաշտոնի դադարեցումից հետո՝ 30 օրվա ընթացքում, նշանակվում է նոր հայտարարագրման պարտականություն նախատեսող պաշտոնում, ապա պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու եւ ստանձնելու հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն չունի:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե տվյալ տարվա ընթացքում պաշտոնի դադարեցման եւ պաշտոնի ստանձնման միջեւ տեւողությունը 30 օրից ավելի է, ապա պետք է ներկայացնի միայն պաշտոնը դադարեցնելու հայտարարագիր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեւանի Ֆիրդուսի փողոցում չշահագործվող մսուր-մանկապարտեզի արտաքին պատից 3 քմ հատված փլուզվել եւ լցվել է մոտակա խանութի (18 քմ) տանիքին՝ վնասելով տանիքը եւ խանութը (մոտ 9 քմ): Տուժած քաղաքացիներ չկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 9 + 14 +26 + 30
Կոտայքի լեռներ	+ 9 +14 +25 + 28
Կոտայքի նախալեռներ	+16 + 18 +32 + 34
Գեղարքունիք	+11 + 15 +22 + 26
Լոռի	+ 9 + 14 +23 + 27
Տավուշ	+12 + 16 +26 + 31
Արագածոտնի լեռներ	+ 9 + 12 +23 + 26
Արագածոտնի նախալեռներ	+16 + 19 + 23 + 26

Արարատ	+18 + 21 +35 + 37
Արմավիր	+15 + 18 +34 +36
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 12 +23 + 25
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 21 +35 + 37
Սյունիքի հովիտներ	+17 + 20 +33 + 37
Սյունիքի նախալեռներ	+11 + 13 +26 + 29
ԼՂՀ	+17 + 21 +32 + 37
Երեւան	+18 + 20 +35 + 37

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.7.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*